ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀՐԱԶԴԱՆԻ ՆՍՏԱՎԱՅՐԸ

28.02.2019 16:36

Կոտայքի մարզպետարանում այսօր՝ փետրվարի 27-ին, տեղի է ունեցել ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի Հրազդան քաղաքի նստավայրի բացման արարողությունը: Դեռևս 2018թ. հոկտեմբեր ամսին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի և Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանի միջև համագործակցության հուշագիր էր ստորագրվել: Ըստ այդ փաստաթղթի կողմերը պատրաստվում են համագործակցել մարզի բնակիչների համար իրազեկման ծրագրերի իրականացման, անվճար և արդյունավետ իրավաբանական օգնության տրամադրման ուղղություններով: Գրասենյակում քաղաքացիներին ծառայություն են մատուցելու ոչ միայն հանրային պաշտպանները, այլ նաև այն փաստաբանները, որոնք չունեն գրասենյակային տարածք գործունեություն ծավալելու համար: Դրա փոխարեն այդ փաստաբանները շաբաթական մեկ անգամ անվճար իրավաբանական խորհրդատվություն կտրամադրեն մարզի բնակիչների համար:

«**Վստահ եմ որ այս համագործակցության շահառուն լինելու են մեր քաղաքացիները: Որքանով որ տեղյակ եմ մարզպետարան դիմող քաղաքացիների մեծ մասի խնդիրները կապված են իրավական հարցերի հետ և այս առումով այս հարթակը լավ հնարավորություն է տալիս մեր քաղաքացիներին ստանալ իրավական օգնություն և թեթևացնել պետության բեռը**»,- նշել է Արա Զոհրաբյանը:

«**Այս փուլում այս ֆորմատի աջակցությունը շատ կարևոր է մարզի համար և ուրախալի որ հենց ձեզ հետ ենք իրականացնում**»,-հայտնել է Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը:

Այսօր՝ փետրվարի 28-ին ՀՀ փաստաբանական դպրոցի իրավաբանական կլինիկան, փաստաբանների հետ իրականացնելու է անվճար իրավաբանական խորհրդատվություն Կոտայքի մարզի բնակիչների համար:

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի Հրազդան քաղաքի նստավայրի բացման առիթով Կոտայքի մարզպետը գրասենյակին նվիրել է Աբովյան քաղաքի Գեղարվեստի ուսումնարանի սաներից մեկի գեղանկարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ
HRAZDAN CITY RESIDENCE
OF THE PUBLIC DEFENDER'S OFFICE
CHAMBER OF ADVOCATES OF THE
REPUBLIC OF ARMENIA
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA





Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })